

այս ըսածը յիշենք շատերուն անձանօթ հետեւեալ զրուագրը:

Սայիտ Փաշայի յաջորդող Գահլիճին Ներքին Գործոց Նախարարը, Հաճի Ատիլ Պէյ, գրաւոր կերպով իրեն կ'առաջարկէ նահանգի մը (կարծենք Գաղատիա) կուսակալութիւնը: Հանգուցեալը, նոյնպէս



Վսեմ. Գրիգոր Սիմապեամ

գրաւոր կերպով, կը պատասխանէ և ըսելով որ՝ «իրեն առաջարկուած նախարարութիւնը ընդունելով՝ քանզաւ էր տարիներու աշխատութեամբ ստեղծած զործը և չէր ուզեր, վաղը ինչ ըլլալիքը անըստոյգ նոր պաշտօն մ'ընդունելով՝ ցրուել իր գրատունը ու բաժնուիլ իր սիրած աշխատութիւններէն», կը մերժէ իրեն առաջարկուած պաշտօնը:

Ընդհ. պատերազմէն յետոյ եկած է հաստատուիլ Բարիզ և անդամակցած է Բարիզի Համագումարին, և յաւէտ յիշատակելի Պօղոս Նուպար Փաշայի նախագահած Ազգային Պատուիրակութեան:

Ժամանակ մը վարած է Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը և յետոյ կոչուած է սոյն Միութեան Օրէնսգէտ Խորհրդականի և Գրատան Վարիչի պաշտօններուն՝ զորս վարեց մինչեւ վերջը, անդամակցելով միանգամայն կեդրոնական վարչական Ժողովին:

30 Նոյեմբեր 1933 թուականին գումարուած Հ. Բ. Ը. Միութեան վարչական

ժողովի նիստին մէջ կը զգայ առաջին խիթերը՝ այսքան կարճ ժամանակի մէջ զինքը զգետնող ցաւին, և չկարենալով սպասել նիստին աւարտելուն, ուղղակի կը դիմէ հիւանդանոց, ուր և կը վախճանի Գեկտեմբեր 22ին:

Տեղն է ըսելու թէ՛ նա պատնէշին վրայ ինկաւ:

Ողբացեալին մահուամբ որ Ատենապետ էր «Մուրատ-Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան» կը վերջանայ՝ իրենց վարած պետական բարձր և կարեւոր պաշտօններով Հայ անունին պատիւ բերող նախկին Մուրատ-Ռափայէլեաններուն շարքը, և ասկէ յետոյ, Մուրատ-Ռափայէլեան երկնակամարին վրայ փայլող համաստեղութեան մաս կազմող Տիար Սինապեանով՝ Մելգոն Խաներու, Պըլլըզեաններու (Ռումանիա), Փորթուզալ Միքայէլ և Սազըզ Յովհաննէս Փաշաներու, Չամիչ Յովհաննէս, կարապետ Գարագաշ և Արամ Յ. Երամ էֆէնտիներու շրջանը կը փակուի:

Յանձին Վսեմ. Գր. Սինապեանի, Մուրատ-Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութիւնս կը կորսնցնէ պատուական անդամ մը, որուն մահը անդամանելի խրամատ մը կը բանայ մեր շարքերուն մէջ:

Ընդհանուր պատերազմին և անոր յաջորդող քաղաքական պատահարներուն բերմամբ գործելէ դադրած Միութիւնը, երբ որոշեց վերակազմուիլ (1929) Բարիզում մէջ՝ ողբացեալը, որ 1908էն ի վեր մաս կը կազմէր անոր, եղած հրաւերին առաջին պատասխանողներէն եղաւ, և իր անվերապահ յարումն ու վերաբերումը անոր նպատակին, ժողովներու ներկայ գտնուելու իր օրինակելի ճշդապահութիւնը՝ թանկագին ազդակներ եղան միութեան:

Ինքը այդ Միութեան՝ անունով երրորդ, իսկ կարգով չորրորդ Ատենապետն էր, յաջորդած ըլլալով Տեարք Արամ Յ. Երամ մի և Յակոբ Փափագեանի, որոնց առաջինը՝ 1909էն 1913 և 1919էն 1922 թուականներուն՝ երկու անգամ, իսկ երկրորդը՝ 1914ին վարած էին սոյն պաշտօնը:

«Տեղեկատու» (1933, Յուլ. Գեկ.) Մ. Ա. ԵՄՍԱՀ



ՄԻՔԱՅԷԼ  
ՓՈՐԹՈՒԳԱԼ  
ՓԱՇԱ.

*Միքայէլ Փորթուգալ*

ԿԱՆ մարդիկ որոնց բովանդակ կեանքը անընդհատ ճիգ մ'է, յուսահատ ճիգ մը դէպ ի այն ամէն բան որ մեծ և երջանիկ կ'ընէ զմարդ. բայց ի զուր. վասնզի հակառակ իրենց ճիգերուն՝ կը մնան միշտ փոքր, միշտ թշուառ: Կան ուրիշներ ալ որ հազիւ բախտին փայփայանքը կը զգան, և հարուածներ, վիշտ ու ձախողութիւններ կը յաջորդեն, ժպիտը լացի կը փոխուի, ծաղիկը փուշ կը դառնայ: Կը զբոնուին նաեւ ամենաքիչեր, հազարէն մէկը, որոնք խանձարուրքէն կը թուին երջանկութեան սահմանուած, որոնց կեանքի շաւիղը ծաղիկներով զծուած է, և թողած

հետքերին լուսաւոր, և որոնց յաջողութեանց կամ փառքի շէնքը ոչ թէ բախտէն ընծայուած դէպքերու՝ այլ ստոյգ և իրական արդիւնքներու վրայ հիմնուած բնաւ չի խախտի, բայց եթէ այն ատեն միայն՝ երբ կենաց ճրագը կը մաքի:

Այս վերջիններու դասէն եղաւ մեծանուն հանգուցեալ վսեմաշուրջ Միքայէլ Փաշա Փորթուգալ, զոր մահը յանակնկալ խլեց 1897ի Նոյեմբեր 18ին, դեռ առոյգ հասակի մէջ, խոր սուգի համակելով անոր սիրասուն ընտանիքը, զինքը սիրող և յարգող բարեկամները և ծանօթները. և ինչո՞ւ չըսենք՝ բոլոր Հայ Ազգը. որ թերեւս քան

ուրիշ ժամանակ պէտք ունէր այնպիսի մեծահոգի, եռանդուն և երախտաւոր գործիչի: — Մինչ ազգային բոլոր Օրաթերթեր և Հանդէսներ և ոչ սակաւ օտար լրագիրներ եւս<sup>1</sup> տխրութեամբ ծանուցին մահը և լիուրի գոհութեամբ դրուատեցին մեծանուն հանգուցեալին արժանիքը, անստգիւտ վարքը և անխոնջ գործունէութիւնը, որքան աւելի պարտականութիւն մ'ունինք մենք, — աւելի սերտ և անձուկ կապեր ունենալով նա մեզի հետ՝ Միաբանութեանս ամենէն աւելի սիրող եւ սիրելի անձերէն մին ըլլալով, — իրեն նուիրելու քանի մը էջերը թերթիս, զոր նա ինքն իր կենդանութեան միջոց այլեւայլ անգամ պատուեց իր ծանրակշիռ յօդուածներով:

Ծնած է Միջագիւղ — Կ. Պոլիս, 1842-ին, որդի Փորթուզալ Յովսէփի, որ Փղերանոցի պաշտօնեայ էր և իր գիւղին ամենէն աւելի պատուուաւոր անձը: Միջայէլ նախնական ուսումն և կրթութիւնն առաւ իր բնիկ գիւղի Հայ կաթողիկէ հասարակութեան վարժարանին մէջ, ուր սրամտութեամբ, ջանասիրութեամբ և բարի վարքով վը փայլէր աշակերտներուն մէջ: Տակաւին ութամեայ՝ հասուն հասակի ծանրութիւն և իրհականութիւն ունէր իր սովորական ձեռախաղերն էին գիրք և գրիչ. այն տարիքէն սուր և թափանցող միտք մը կը ցոլար իր վառվուռն աչքերուն մէջ, ինչպէս նաեւ հոգւոյն մեծութիւնը դէմքին վրայ:

Ժամանակ մը աշակերտած է նա նաեւ Ազգիս նշանաւոր բանաստեղծ Պէշիքթաշլեանի: Օր մը, երբ աւարտեր էր դասախօսութիւնը, աշակերտներէն մին կը մօտենայ Պէշիքթաշլեանի և կը հարցնէ՝ թէ Այսչափ տղոց մէջէն ո՞վ է ամենախե-

լացին: — Կը տեսնե՞ս, կ'ըսէ բանաստեղծը, այն փոքրիկ տղան որ զրասեղանին առջեւ կծկած կը կարդայ և կը զրէ շարուսակ. նա է մէջերնիդ ամենախելացին:

Հինգ վայրկեան վերջ բոլոր տղոց բերանն էր, թէ « Միքէն է դպրոցին մէջ ամենախելացին »: Այդ փոքրիկ Միքէն ապագայ Միջայէլ փորթուզալ փաշան էր:

1852ին նա փարիզ անցաւ Մուրատեան վարժարանին մէջ բարձրագոյն ուսումններն առնելու և կրթուելու համար: Նոյն վարժարանին մէջ, երեք մէկ մէկէ աւելի աւելի նշանաւոր և գիտնական դաստիարակներու խնամքներուն ներքեւ — որպիսի էին Հ. Գարբիէլ վ. Այվազովսքի, Հ. Ռափայէլ թրեանց և Հ. Ղեւոնդ վ. Ալիշան, — ուշիմ պատանւոյն մտաւոր և հոգեկան կարողութիւնները զարգացան իրենց բոլոր ուժով, և այդ ինամոտ դաստիարակներուն պտուղներն եղան անոր ապագայ կեանքի փայլուն յաջողութիւնները: Բաւական է յիշել նոյն յարկին ներքեւ գտնուած ժամանակակից աշակերտներուն անունները<sup>2</sup> և պիտի տեսնէ մարդ թէ որպիսի ապագայ նշանաւոր անձերու հոյլ մը պատեր էր Միջայէլ պատանին: Յատկապէս, դեռ փոքրիկ եղած ժամանակ, Այվազովսքիի խնամքներուն և համարումին առարկայ դարձեր էր նա, իր ջանասէր և ազնուական բարքին համար. սկիզբէն ի վեր սիրող և մշակող եղած էր մեր նախնեաց լեզուին եւ զրականութեան, և մինչեւ վերջ չթողուց բնաւ այդ ասպարէզը, որ ոչ նուազ քան գործունեայ կեանքը պատուաբեր եղաւ իրեն: Միեւնոյն խնամքն և սէրը տեսաւ նա նոյնպէս իր երկրորդ տեսուչէն, որուն ժամանակ աւարտեց իր ուսումնական շըր-

1. Յիշենք, որ Գաղղոյ նշանաւոր Le Temps թերթը, որ իր 13322 համարին մէջ, նոյն օրուան հեռագիրներուն մէջ գետեղեր էր նաեւ հետեւեալը. « Կ. Պոլիս, 23 Նոյեմբ. 1897. Միջայէլ փաշա փորթուզալ կաթողիկէ հայ, վեց տարիներէ ի վեր Նախարար Սուլթանին Անձնական Գանձին, վախճանեցաւ: Եղեր էր նա փարտաւոր Մեծ Եպարքոս Աւի փաշայի, Տեւոսէ Մաքսատան, Խորհրդական Ելեւմտական Նախա-

րարին և Վերատեսուչ Երկրագործական Գրամատան Գերագանց մատակարար մ'էր նա Կայսերական Գանձին և անստգիւտ անձ մը. եւն. »:

2. Գրիգոր Պըլըզեան, Պետրոս Քէրէտէճեան, Կարապետ Գարագաշեան, Ստեփան Պալասանեան, Եւրուպ Արթին փաշա, յետոյ Տիգրաններ և Ալլահվերտեաններ եւն եւն:

ջանը: Հազիւ մտքին թեւերը բուսած, չփորձեց նա ուրիշներու նման թռչել դէպի Հայրենիք, քանի որ վարժարանը երկրորդ հայրենի տուն, և դաստիարակները իրեն ճշմարիտ ծնողներ եղեր էին. կ'ուզէր սակաւին ճոխացնել իր մտաւոր պաշարը, և այն պատճառաւ քանի մը տարի եւս մնաց դպրոցին մէջ իր բարձրագոյն ուսանող, — այս ժամանակ էր ահա որ Հ. Ղեւոնդ վ. Ալիշանի հայրութիւնը վայելեց:

Մեծ բան մ'ըսած չենք ըլլալ՝ եթէ հաստատենք թէ սիրելի էր նա առհասարակ բոլոր մեծերուն և ընկերակիցներուն, իր գեղեցիկ ձիրքերուն համար, օրինակ էր ամենուն կարգապահութեան և փութաշանութեան, յարգելի և պատկառելի իր բոլոր աշակերտակիցներուն առջեւ, որոնց մէջ կը գտնուէին այն ժամանակ երեք ազնուական ընտանեաց զաւակներ, Պողոս Ալլահվերտի, Արթին Չամչեան, և Յակոբ Տամատեան: Եթէ Հ. Ղեւոնդ վ. Ալիշան՝ վարժարանին հոգին էր կամ գլուխը, այս երեքն ալ՝ Մ. Փորթուզալին հետ միասին՝ երկու զոյգ աչքերը՝ իրենց բարի վարքով, ազնիւ կրթութեամբ և ուսումնասիրութեամբ:... Չմոռնանք ըսելու որ կրօնական պարտքերուն մէջ ալ շատ եռանդուն էր, և յաճախ ամէն շաբաթ մէկ կամ երկու անգամ հաճութեամբ տեսչին՝ իր վերոյիշեալ ընկերներուն հետ կ'ընդունէր Ս. Խորհուրդները, որոնք ոչ միայն հոգեկան շնորհաց, այլ և մտաբացութեան և երջանկութեան աղբիւր կ'ըլլային իրեն:

Լեզուներու և գիտութեանց հարուստ պաշարով Կ. Պոլիս դառնալէն յետոյ... ամէն տեղ և ամենէն եւս գնահատուեցան անոր բարձր արժանիքները:

Իր ստացած ընտիր կրթութիւնը գործածեց յօգուտ իշխանական ընտանեաց, որոնց զաւակներուն դաստիարակ կարգուեցաւ: Եթէ իր հազուագիւտ ձիրքերուն շնորհիւ այնքան նախանձելի զիրքերու հասաւ, սակայն ոչ գիրք և ոչ փայլ զինքը չկրցան շլացնել: Ամենէն աւելի վտանգաւոր հասակին մէջ՝ պատանութեան և երիտասարդութեան՝ զերծ մնաց նա ամէն

տեսակ փոթորիկներէ և ալիքներէ. ամուր բռներ էր իր սրտին դեկը, որով խաղալիկ չեղաւ կրքերու բռնութեան:

Իր լեզուագիտութեամբ թարգմանի պաշտօն վարեց Բ. Գրան և յետոյ Կրետէի մէջ՝ Ալի փաշայի հետ: Վերադարձին Կ. Պոլսոյ մաքսատան մէջ գործեց՝ ամենամեծ ծառայութիւն մատուցանելով տէրութեան իր հնարագիտութեամբ, ինքնին ծրագրելով դրոշմաթուղթի և լրագիրներու դրոշմի օրէնքը որ ընդունուեցաւ և անով տէրութեան գանձն աճեցաւ: Գրեթէ 12 տարի հաւատարմութեամբ ծառայելով մաքսային գործերու մէջ՝ կարգուեցաւ Խորհրդական Ելեւմտից նախարարին: Սոյն պաշտօնին մէջ եւս ցոյց տալով հաւասարապէս սրամտութիւն և անձնուէր գործունէութիւն՝ Սուլթանին յանձնարարութեամբ Երկրագործական դրամատուն մը հաստատեց, ինք վարելով վերատեսչութիւնը և մեծ շահ բերելով տէրութեան:

Սոյն պաշտօնավարութեան մէջ իր աջողակ և հաւատարիմ գործունէութիւնը իր վրան հրաւիրեց ոչ միայն պետութեան բարձրաստիճան անձերու ուշադրութիւնը, այլ նոյն իսկ Սուլթանին՝ որ հայազգի Յակոբ Փաշայի մահէն վերջ՝ զինքը դրաւ նախարար իր Անձնական Գանձին: Քիչ յետոյ ընունեցաւ նաեւ Վեդիքոսթեան բարձրագոյն աստիճանը, ինչպէս որ ունէր Օսմանիի, Մեթիսի, Խոթիսի ոսկի և արծաթ և ուրիշ տէրութեանց բազմաթիւ շքանշաններ: Այս բարձր պաշտօնին հետ ունէր նաեւ կայսերական իշխաններու — որոնք մեծ յարգանք և համարում ունէին իրեն վրայ — ուսմանց բարձրագոյն հսկողի պաշտօնը:

Շաքարախտի անողոք հիւանդութիւնն և ուրիշ ցաւեր սակայն, զինքը մահուան դուռն հասցուցին: Այդ ճգնաժամին անգամ ցոյց տուաւ նա իր հոգւոյն մեծութիւնը, Եկեղեցւոյ սուրբ Խորհուրդներով զօրացած և մխիթարուած, անխռով և քրիստոնէավայել արիութեամբ ընդունելով Աստուծոյ սահմանած վճիռը: Եւ այնպէս փառքով կնքեց նա իր մահկանացուն,

թողուով աշխարհիս բարեխիղճ և անբասիր պաշտօնեայի, բարի քրիստոնեայի և զիտնական անձի համբար:

«Համագգային վշտի ընդհանուր արտայայտութիւն մը եղաւ, կ'ըսէ Բիւզանդիոն, ողբացեալ Միքայէլ Փաշայի յուզարկաւորութիւնը»...:

Այդ սգահանդէսին ներկայ էին բոլոր նշանաւոր անձերը Կ. Պոլսոյ, առանց դասակարգի և դաւանական խտրութեան: Հոն էին Յ. Սազըզ՝ յաջորդ հանգուցելոյն Կայս. Անճնական Գանձին նախարար, Կայս. պալատին, Բ. Դրան, դեսպանատանց, դրուժմատուններու, ամէն տեսակ ընկերութեանց, վարչութեանց և տեսչութեանց ներկայացուցիչներ. բոլոր եկեղեցիներու և կրօնական դաւանութեան պետերու փոխանորդներ:...

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՓՈՐԹՈՒԳԱԼ ՓԱՇՍՅԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ<sup>1</sup>

Ես իմ կեանքում շատ բարեկամներ եմ ունեցել, որոնցմէ ոմանք վախճանել են և ոմանք դեռ կենդանի են. մարդելոյզ չհամարուելու համար, իմ կենդանի բարեկամներուս բարեմասնութեանց մասին խօսիլն այստեղ զանց կ'առնեմ և միայն այն վախճանած բարեկամներուս առաքիտութեանց վրայ կը խօսիմ, որոնց կատարելութիւնը և շնորհք անմոռաց յիշատակներ են թողած սրտումս:

Իմ պատանեկութեան կամ ուսանողութեան տարիքումս, ունեցել եմ մի ուսուցիչ դաստիարակ, Միսիթարեանց ուխտէն, Հայր Ստեփաննոս Երզրանեան անուն, որ ինձ՝ բացի հայրենի ուսմանց և զիտու-

1. Հոս կը գետնդնը քանի մը հատուած յօդուածէն Մարկոս Աղաբէգեանի՝ նոյնպէս մեր Մուրատեան Վարժարանի անուանի աշակերտներէն - (առաջինը՝ Բարիզու մէջ, 1846ին), Մ. Փորթուզալի կենդանագրին քով անշուշտ ընթերցողը պիտի տեսնէ հեղինակին ալ, որքան որ կարելի է հետեցնել: Ծ. Խ.

2. Տեղւոյ անձկութիւնը կը ստիպէ մեզ դուրս թողուլ յաջորդ անձերու նկարագրերը, ինչպէս են՝ Գէորգ Արվերտեանց, Տիգրան աղա Կիւմրիշկերտան, Երուստի փաշա:

թեանց ճաշակը տալուց, իբրև բարեկամ մարդկութեան պէտք եղած զգացմունքներն էլ է ներշնչած ինձ: Բայց դա միայն մի կերպարանք ունէր, վարդապետ էր:

Ապա երիտասարդութեան հասակումս մի բարեկամ եմ ունեցել, Պետրոս Շանշեանց անուն թիֆլիզում, որ բացի իր



Մարկոս Աղաբէգեան

վարքով և բարքով, խօսքով և գործով, մարդկային կատարելութեան մի անջնջելի պատկերը զրոշմելուց յետոյ սրտումս, ինձ սիրեցուց նաեւ քրիստոնէական առաքիտութիւնը, բայց դա մի ամուրի ուսուցիչ էր քրիստոնէական ուսմանց և բարձր աստիճանակիր ազնուական<sup>2</sup>:

Այդ վախճանած անճնաւորութեանց հետ ունեցած բարեկամութեանս յիշատակներն այս տեղ առաջ բերելու պատճառն այս է որ, ինձ լսող կամ կարդացող որ և է անձի կարծիք չտամ, իբր թէ ես միմիայն Փորթուզալ Միքայէլ Փաշան եմ ճանաչած իմ կեանքում և նրա առաքինութեանց և շնորհքներու վրայ զարմացած՝ խօսում եմ կամ ճառագանում այս տեղ. ո՛չ բնաւ: Այս է իրան

որ զրանց բարեկամութիւն քիչ ժամանակ, այսինքն մի, երկու տարի եմ վայելած. մենչդեռ Միքայէլ Փաշայինը հինգ կամ վեց տարի եմ վայելած, հետեւաբար կարող եմ եղած խորը թափանցել նրա ամեն յարգի յատկութեանց և բնութեանց և զուգակշռել նրանց բարեմասնութեանց հետ:

Փորթուզալ Միքայէլ Փաշայի առաջադիմութիւն Օսմանեան տէրութեան պաշտօնատարութեան մէջ, բնաւ ամենեւին բաղդի և շնորհի ձեռքով չէ եղած, հապա միայն իր բանիմաց և իրագէտ գործունէութեան և ճշդապահ ու հաւատարիմ ծառայութեան:...

Մի փոքր ժամանակ յետոյ է որ, մեր արդէն իրարու հետ ունեցած ծանօթութիւն իբր Պարիզու Մուրատեան Վարժարանի ուսանող, Միքայէլ Փաշայի հետ, դառնում է բարեկամութեան և մեր բարեկամութիւն տարուէ տարի տեւելով, պնդանում է և լինում անկեղծ ու մտերիմ բարեկամութիւն: Սակայն Միքայէլ Փաշան միայն տէրութեան պաշտօնեայ մարդ չէր, հապա երկու, երեք իրարմէ տարբեր մարդ էր. ինչ որ էր իբրև կայսերական կառավարութեան պաշտօնատէր իր պաշտօնավարութեան մէջ կամ ժամանակ, նոյն անձը չէր իր կենցաղավարութեան մէջ, հապա մի պատուաւոր պարզ մարդ, նմանապէս շատ էլ տարբեր քրիստոնեայ հայ մարդ էր: Այդ երեք իրարմէ տարբեր կերպարանքներն այդ մարդն (Միքայէլ Փաշան) զարմանալի ներգաշնակութեամբ գործ էր անում ամենամեծ ձիրքով, և ես միայն նրա հայ քրիստոնեայ մարդութեանն էի բարեկամ և ոչ նրա մարդութեան միւս կերպարանքներուն. նա իբրև պաշտօնէապետ, մի միայն վարած պաշտօնին ակներուն (անիւններուն) անարգել և զիրին դառնալուն հոգսն էր տանում և յաջողում էր. բարեկամ, ազգական և ծառայող երբ իր պաշտօնի մեքենայի գործելուն արգելք էր լինելու, զէնն էր քշում: Մի օրինակ. — մէկն մի անգամ նրամէն պաշտօն ինդրեց իր պաշտօնէութեան մէջ. սասց նրան անկեղծօրէն. Դուն իմ

պաշտօնէութեան մէջ ծառայելու պէտք եղած յատկութիւնը չունիս. երկրագործ, երկրաչափ, արհեստաւոր մարդ չես և ոչ էլ թուրքերէն զրագիր: — Իրաւունք ունէր փաշան, վասն զի իրաւ որ նա այնպէս մէկը չէր: Իր պաշտօնէութեան վերաբերող ամէն գործ նախ ինք ճշտութեամբ և շտապութեամբ նոյն օրուայ մէջ կատարելով, իր ծառայող պաշտօնեաներէն էլ նոյն բանն էր պահանջում. մի գործ ձգձգել զիշեր ժամանակ կամ տանն աշխատելու համար, սովորութիւն չունէր. տան մէջ իր սիրական զբաղմունքներով էր պարապում: Տնական կարգապահութեան մասին մի օրինակելի տիպար էր. տան մէջ սենեակներու բաժանում, կահ կարասիներու սարքում, սեղանատուն, հիւրատուն, հապա զբքատուն, որու մասին յետոյ եմ խօսելու, պարտէզները, անտառիկը ջոկ, աժոնները մաղառայն ջոկ, ծաղկոցն էլ առանձին, ամէն ժամանակ ծաղկած մշակուած էին. ծառաները մաքուր հագուած ու քաղաքավարի, միշտ իրանց գործին վրայ պատրաստ, գնացող եկող անպակաս, բայց ձայն ձայտուն չկայ, մի խօսքով այդ տուն մի ժամացոյց էր, chronometre, ճիշտն ասելով Միքայէլ Փաշայի պատկերը:...

Մտնենք այժմ զբքատուն: Առաջին անգամ որ տուն գնացի իր հրաւերին վրայ, սպասաւորն ինձ ներքին հիւրասենեակն առաջնորդեց, ապա գնաց Փաշային իմաց տուեց իմ զալուստ. մի ըրպէ անցկացաւ թէ չէ՝ Փաշան ինք, որ այդ ժամանակ էֆէնտի էր, ներս մտաւ հիւրասենեակ և ինձ իր զբքատուն հրաւիրեց. իրար բարեւելէն յետոյ, իմ նայուածք մի զիմացս, մի քամակս գնաց ինքն իրան, տեսայ կարգով զրուած կաղնաշէն և կահենաշէն բարձր բարձր դարաններ, պրկէպտունք զրեան պարունակած, ամենքն էլ կազմած և կարգով շարուած, բացի այդ դարաններէ, զբասեղանին վրայ և պտուտաւոր զբքակալումն էլ լիքն էին զբքերով: Մի փոքր խօսակցելէ յետոյ, դարաններէ միուն միջէն դուրս հանեց մի Յայսմաւոր-

քի չափ գիրք՝ կազմած և թղթապատ ու բերաւ առաջս դրաւ: Ահա՛ այս է ասաց, իմ աշխատասիրութիւն Եղիշէի ուսումնասիրութեան վրայ: Բաց արի այդ իսկոյն, տեսայ մի գրչագիր ամենամաքուր, թերթեր ու էջեր հարկւրաւոր, անգլիական ամենաընտիր կապուտակ թուղթ: Իսկոյն իմացայ թէ ինչ աշխատասիրութիւն է այդ վեր առի այդ հազգին գիրք, համբուրեցի և ճակտիս վայցուցի. Շատ ապրիս, շատ ապրիս, ասացի. ահա՛ Պոլսումն էլ մի հայ եմ տեսնում Շանշեանցի և Ախվերտեանցի նման Եղիշէի յարգն ու պատիւը գիտացող: Այդ օրէն այդ պատուական Միքայէլ Փաշան ինձ համար մի աննման մարդ դառաւ:...

Միքայէլ Փաշայի բնոյթը բնական էր, շինծու ձեւերն մեւեր չունէր, խնդումներես էր թէեւ, բայց այնքան մտածողութիւն իրան սովորական էր եղած և այնքան զօրաւոր էր մտածելու կերպին մէջ, որ իր վրայ տիրող կիրքն էր եղած և չափաւորում էր իր զուարթութիւնը: Հինգ վեց տարուայ մէջ շատ քիչ անգամ ճկուտած (mauvaise humeur) տեսայ իրան, ոչ մի օր ծառայներու կամ տնեցոց կամ երախաներուն չախելն ու սրդողելն չեմ տեսած, բարեկամի պէս վարուում էր նրանց հետ:

Ես շատ անգամ հետաքրքրուել եմ իմանալու նոյն իսկ իրամէն իր անցելումը վարած կեանքին և պաշտօններուն պատմութիւն և ինքն էլ շատ սիրով զոհացուցած է իմ հարցասիրութիւն: Միքայէլ Փաշա շատ լաւ մտածող լինելով, թէ՛ լաւ խօսող էր և թէ՛ լաւ զրող, և այդ պատճառով շատ հետաքրքրելի էր անում իր պատմութիւն: Մի անգամ ասացի իրան. Փաշա էֆէնտի, աշխարհումս ենք ապրում, այսօր կանք ու վաղը չկանք և ո՞վ գիտէ ինչ ենք լինելու, արի՛ զու ինքզրու կենսագրութիւն գրիր և աւանդիր քո սիրելի Աշխէն աղջկանդ:— Ինչ կարեւորութիւն ունի իմ կենսագրութիւն, ասաց նա: Ես քաջ գիտեմ որ իրաւ էր ասում, դա այն աստիճան մխրճուած էր իր մտածմանց մէջ, իր տեսած գործքերուն և լսած խօսքերուն վրայ միտք էր բանեցնում և յոգնեցնում՝

որ յիշողութիւնը զոհում էր մտածողութեանը և ընկերական և ընտանեկան բաներու կարեւորութիւն չէր տալ, այդ լաւ յատկութիւն էր թէ վատ յատկութիւն չեմ կարող ասել, բայց կարծեմ գիտենալ որ այդ յատկութիւն իր առոյգ կազմուածքին և կայտառ առողջութեան թաքուն կերպով փնասեց:...

Վերջապէս Միքայէլ Փաշա այն թերութիւնը կամ սովորութիւնը չունէր, որ ընդ կատարելութիւն են համարուած այս քաղաքում, թուղթ խաղալ, քլիւպ երթալ, գոնձելութիւն անել, ցոյց անել, խօսք տալ ու չկատարել, սրա ու նրա զուտը իւղել, մեծ խօսել, պզտիկ մանրել և այդպիսի ուրիշ կատարելութիւնը: Ասում են թէ նա իր ասածի մարդ էր, այսինքն յամառ, կամակոր, հաստատամիտ մարդ լինելը ճանաչեցի, բայց կամակոր՝ ոչ, ի հարկէ, երբ բանի խորը քննելով իմանում էր նա ճշտութիւնը՝ պէտք էր որ իր ասածի վրայ հաստատ մնար, նոյն բանին էութիւնը չզիտացողին մօտ, կարելի է որ մարդ ճանաչելումը նա վարանող լինէր, կամ կասկածոտ, բայց իր տնօրինած գործին կամ տուած հրահանգին վրայ սկեպտիկեան չէր: Մտքի սուր նայուածք ունէր և հեռուն էր նկատում. մի խօսքով կատարեալ տէրութեան պաշտօնեայ էր, կատարեալ քաղաքացի մարդ էր և կատարեալ քրիստոնեայ հայ մարդ. այդ երեք կատարելութիւն այնպիսի շնորհքով իրարու հետ միացուցել և ընտանիքի տէր, առաքինի կնոջ ամուսին, սիրուն ու մատղաշ դաւակներու հայր էր եղած, որու նմանը կարծեմ մեր ազգայնոց մէջ հազիւ թէ տեսնուած լինի, կամ թէ այդպիսի մի մարդութիւն միայն Փորթուգալեան Միքայէլ Փաշայի վրայ տեսնուած լինի: Այդպիսի մի անձնաւորութիւն ճանաչած եմ ես վեց տարուայ բարեկամութեանս մէջ Միքայէլ Փաշան, իսկ նրա սիրտն ու հոգին, այսինքն նրա ներքին մարդութիւն միայն Աստուծոյ է յայտնի և ոչ մարդու:

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ

Պոլսոյ գիւղ, 1897 չ. 11

ԶՕՐԱՎԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՊԱՋՐԿԵԱՆԵԱՆ

Մուրատեան Վարժարանի քաղաքական բազմաթիւ կարկառուն դէմքերուն մէջ - որոնց ամենուն վրայ չենք կրնար դժբախտաբար ծանրանալ հոս - իր յատուկ դիրքն ունի Զօր. Կ. Պազրկեանեան, որ ինչպէս Մեքոն խան, մեծամեծ ծառայութիւններ մատուցած է Պարսիկ Պետութեան, երկար տարիներ, թէ՛ իբրեւ քաղաքակրթական մեծ զարկ տուող և թէ՛ իբրեւ քաղաքագէտ - պաշտօնեայ:

Զուակն է Պօղոս Պազրկեանեանի, ծնած ի Կ. Պոլիս՝ 14 Յունուար 1844ին: Բախտն ունեցած է Մուրատեան Վարժարան մտնելու ի Բարիկ և աշակերտելու Ալիշանի՝ 1855-60ի շրջանին: Իբրեւ քաղաքական ասպարէզի պատրաստութիւն՝ նա կատարած է Բարիկի մէջ իրաւագիտական ընթացքը՝ փայլուն ապացոյցներ տալով ճարտարախօսութեան:

Կ. Պոլսոյ Պարսկական դեսպանատան ծառայութեան մէջ մտնելէն յետոյ է որ կ'անցնի Պարսկաստան և հոն կը հիմնէ Պարսկական Հեռագրութիւնը: 1879ին կ'ամուսնանայ Lancelin de Barry ընտանեաց վերջին շառաիղ օր. Փալմիրայի հետ: Մեծապէս գնահատուած Նասրետին շահէն՝ վարեց Պարսկական Հեռագրութեան վարչութիւնը Մոսքուէն բարձրագոյն տիտղոսով, և յետոյ անբաժան ընկերն և առաջնորդն եղաւ Շահին Եւրոպա կատարած ուղեւորութեանց ընթացքին:

Զօր Պազրկեանեան բազմաթիւ անգամներ պետական լիազօր դրկուեցաւ՝ յաջող և անբասիր միշտ իր ձեռնարկներուն մէջ:

Քաղաքական ասպարէզին հետ միշտ զուգընթաց մշակեց և հոգ տարաւ կրթականին: «Alliance Française» ի նախագահն էր Թէհրանի մէջ: Արդիւնաւոր է նաեւ հիմնած ըլլալով Գասպարեանցի հետ տեղական վարժարան մը հոն թէհրանի մէջ, ուր կը մշակուէին յատկապէս հայերէն և ֆրանսերէն լեզուները:

1908ին Զօր. Պ. քաշուած էր Ֆրանսա. Պարսիկ պետութիւնը անգամ մ'ալ օգտագործեց ա՛նոր բարձր կարողութիւնը՝ զինքը կարգելով լիազօր Փորթուգալի կառավարութեան մօտ:

ԲԱԶՄԱՎԷՊ ՕԳՈՍՏ - ԳԵԿՏ. 1936



44 տարիներու անընդհատ հաւատարիմ ծառայութեան փոխարէն ոչինչ պահանջեց նա Պարսիկ Պետութեանէն: Իր ամբողջ գործունէութեան ընթացքին եղաւ միշտ ուղիղ և անշահախնդիր. ահա հիմնական գծերը իր անբասիր նկարագրին: Նա ապրեցաւ իր ամբողջ կեանքն իբրեւ բարեպաշտ հաւատացեալ՝ այն բարեպաշտութեամբ և հաւատքով զոր ծծած էր Ալիշանի հոգիէն: Եւ մեռաւ օրինակելի՝ - ինչպէս ապրած էր - 1929ին, Յունիս 16, Նիսի մէջ, յաւէտ սիրող և երախտագէտ զինքը դաստիարակող Մխիթարեան Հայրերուն «որոնք գիտցած էին կազմել իր մէջ այնքան ազնուական հոգի մը և այնքան մեծ սիրտ մը», ինչպէս կ'ըսէր զինքը պաշտող իր դուստրը:

Հ. Ե. Փ.